Իբր կառուցուածք *Հին աստուածներ*ը ունի տրամաբանական շարադասութիւն եւ ներկայացնում է գործողութեանց աստիճանական զարգացում: Ընթերցողը հերոսների հետ ապրում է նրանց կեանքը, եւ հոգով ներկայ է նրանց ներքին աշխարհի փոթորիկին, ու գործողութեանց պարզուելուն պէս կարծէք շունչ է առնում:

Բանաստեղծական այս գրուածքի լեզուն այնքան հակիրճ ու ամփոփ է որ կարծէք ամէն մէկ բառի հետ մէկ հարուած իջնում նրան մեխելու իր տեղում: Շատ տեղ յանգեր ու վանկեր, նոյն իսկ իմաստին համաձայն ձայներ, որոնք բեմի վրայ խորհրդաւոր պատկերների հետ հմայող ազդեցութիւն առաջ կը բերեն: Իշխանի աղօթքը Վահագնի բագինին առաջ՝ մի դասական սաղմոսերգութիւն է: Քօղաւորի երգը մի գլուխ-գործոց ոտանաւոր է:

Իսկ եթէ այդ բոլորի վրայ աւելացնենք եւ այն հանգամանքը որ ամբողջ տոռամի մէջ չկայ եւ մէկ հատ մօնօլօկ, որպիսին տասնեակներով շատ սովորական են մեր բոլոր թատերական գրուածքների մէջ – այդ անբնական, տաղտկացուցիչ ինքնախօսութիւնների կամ աւելի ճիշտ շատախօսութիւնների անվերջ շարքերը – այո՛, կը կրկնեմ, եթէ այդ առաւելութիւնն էլ աւելացնենք այս գեղեցիկ գրուածքի վրայ, *Հին աստուածներ*ը իր թերութիւններով հանդերձ կը դառնայ թէ իբր նիւթ, թէ իբր կառուցուածք, թէ իբր հոգեբանական ուսումնասիրութիւն՝ առաջին հայ թատերական աշխատութիւնը: